ԽՆԱՄՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Սույն հայտարարագրի օգտագործումը թույլատրված է Կալիֆոռնիայի ընտանեկան օրենսգրքի Բաժին 11-ի Մաս 1. 5-ով (սկսած 6550 հոդվածով)։ Դա չի ազդում անչափահասի ծնողների կամ հոգաբարձուի՝ անչափահասի խնամքի, խնամակալության, հսկողության վրա և չի նշանակում, որ խնամողն անչափահասի նկատմամբ ունի իրավական խնամակալություն։ Սույն հայտարարագիրը չի նշանակում, որ անչափահասը ավտոմատ կերպով համարվում է խնամյալ՝ առողջական ապահովագրության նպատակներով։

Ստորև նշված անչափահասը բնակվում է իմ տանը, և ես 18 կամ ավելի տարեկան եմ։

1. Անչափահասի անունը. _____
2. Անչափահասի ծննդյան ամսաթիվը. _____
3. Իմ անունը (*լիազորող չափահաս անձը*). _____
4. Իմ տան հասցեն. _____
5. Ես երեխայի ազգականն եմ ("ազգական" բառի սահմանումը տե՛ս այս ձևաթղթի հակառակ կողմում)
6. Նշեք մեկը կամ երկուսը (օրինակ՝ եթե ծնողներից մեկը տեղեկացվել է, իսկ մյուսի գտնվելու վայրն անհայտ է)։

☐ Ես տեղեկացրել եմ անչափահասի ծնող(ներ)ին կամ անչափահասի նկատմամբ իրավական խնամակալություն ունեցող(ներ)ին՝ հոգեկան առողջության խնամքը լիազորելու իմ մտադրության մասին և առարկություն չեմ ստացել։

☐ Ես ներկա պահին չեմ կարող կապ հաստատել անչափահասի ծնող(ներ)ի կամ անչափահասի նկատմամբ իրավական խնամակալություն ունեցող(ներ)ի հետ՝ հոգեկան առողջության խնամքը լիազորելու իմ մտադրության մասիններանց տեղեկացնելու համար։

7. Իմ ծննդյան ամսաթիվն է. _____

8. Կալիֆոռնիայի իմ վարորդական իրավունքի կամ նույնականացման քարտի կամ կառավարության կողմից տրված հյուպատոսական քարտի համարը.
   ID# _____ (Կցել պատճենը. տե՛ս էջ 2, Խնամողներին, #4)

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԽՆԱՄՈՂԻՆ. ՄԻ՛ ՍՏՈՐԱԳՐԵՔ ԱՅՍ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԵԹԵ ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՍԽԱԼ Է, ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ ԿԿԱՏԱՐԵՔ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՊԱՏԺԵԼԻ Է ՏՈՒՅԺՈՎ ԿԱՄ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՄԲ ԿԱՄ ԵՐԿՈՒՍՈՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ։

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻՆ. ԴԱՏԱՐԱՆԻ ԿՆԻՔ ԿԱՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ։ ՍՈՒՅՆ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՉԻ ՊԱՀԱՆՋՈՒՄ։

Կալիֆոռնիա նահանգի օրենքների համաձայն սուտ վկայություն տալու համար նախատեսված պատժի ներքո ես հայտարարում եմ, որ վերոնշյալը ճշմարիտ է և հավաստի: Եթե անչափահասը այլևս չի բնակվում ձեզ հետ, դուք պարտավոր եք տեղեկացնել դպրոցին, առողջապահական ծառայությունների մատակարարին կամ առողջապահական ապահովագրության ծրագրին, որոնց ներկայացվել է սույն հայտարարագիրը: Խնամողի ստորագրությունը. _____
Ամսաթիվ. _____

Այս համաձայնությունը թարգմանվել է _____ հաճախորդի և/կամ պատասխանատու չափահասի համար:

Եթե սույն համաձայնության թարգմանված տարբերակը ստորագրվել է հաճախորդի և/կամ պատասխանատու չափահասի կողմից, ապա այն պարտադիր պետք է կցվի սույն համաձայնության անգլերեն տարբերակին:

- Այս հայտարարագիրը չի ազդում անչափահասի ծնողի կամ հոգաբարձուի՝ անչափահասի նկատմամբ ունեցած խնամքի, խնամակալության կամ հսկողության իրավունքների վրա և չի նշանակում, որ
- խնամողն անչափահասի օրինական խնամակալն է:
- Սույն հայտարարագրի վրա հիմնվող անձը պարտավոր չէ իրականացնել լրացուցիչ ստուգում կամ հետաքննություն:
- Այս հայտարարագիրը վավեր է ստորագրման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ԽՆԱՄՈՂԻ ՀԱՄԱՐ

1. «Ազգական» եզրույթը, որը նշված է 5-րդ կետում, նշանակում է չափահաս անձ, որը երեխայի հետ կապված է արյունակցական, որդեգրման կամ մինչև 5-րդ աստիճանի ազգակցական կապով՝ այդ թվում խորթ ծնողները, խորթ քույրերն ու եղբայրները, ինչպես նաև բոլոր այն ազգականները, որոնց ազգակցական կապից առաջ կա «մեծ» բառը, տատիկներն ու պապիկները, մեծ հորեղբայրները, մեծ քեռիներն ու մեծ հորաքույրները, մեծ մորաքույրները, կամ այս անձանցից որևէ մեկի ամուսինը/կինը, նույնիսկ եթե ամուսնությունը դադարեցվել է մահվան կամ ամուսնալուծության պատճառով:
2. Օրենքով կարող է պահանջվել, որ դուք՝ չլինելով անչափահասի ազգական կամ ներկայումս չլինելով լիցենզավորված խնամատար ծնող, անչափահասին խնամելու համար ստանաք խնամատար ընտանիքի (resource family) կարգավիճակի հաստատում՝ համաձայն Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 1517 հոդվածի և Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի 16519.5 հոդվածի: Եթե ունեք հարցեր, կապ հաստատեք ձեր տեղական սոցիալական ծառայությունների վարչության հետ:
3. Եթե անչափահասն այլևս ձեզ հետ չի բնակվում, հայտարարագիրը համարվում է անվավեր: Դուք պարտավոր եք տեղեկացնել դպրոցին, առողջապահական ծառայությունների մատակարարին կամ առողջապահական ապահովագրության ծրագրին, որոնց ներկայացվել է սույն հայտարարագիրը այն մասին, որ անչափահասն

այլևս ձեզ հետ չի բնակվում և հետևաբար, սույն հայտարարագիրն այլևս վավեր չէ։

4. Եթե դուք չունեք 8-րդ կետում նշված տվյալները (Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի կամ նույնականացման քարտի կամ կառավարության կողմից տրված հյուպատոսական քարտի համար), ապա տրամադրեք անձը հաստատող այլ փաստաթուղթ, օրինակ՝ սոցիալական քարտի համարը կամ Medi-Cal-ի համարը։

ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Կրթական օրենսգրքի 48204 հոդվածով սահմանվում է, որ սույն հայտարարագիրը բավարար հիմք է հանդիսանում անչափահասի բնակության վայրի որոշման համար՝ առանց օրինական խնամակալության կամ այլ խնամքի վերաբերյալ դատական ակտի պահանջի, եթե դպրոցական շրջանը փաստացի տվյալների հիման վրա չի հաստատում, որ անչափահասը չի բնակվում խնամողի հետ։
2. Դպրոցական շրջանը կարող է պահանջել լրացուցիչ հիմնավոր ապացույցներ, որ խնամողը բնակվում է 4-րդ կետում նշված հասցեում։
3. Դատարանի կնիք կամ ստորագրություն չի պահանջվում։ Սույն ձևաթուղթը նոտարական հաստատում չի պահանջում։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ

1. Եթե սույն հայտարարագիրը ստորագրվում է ազգականի կողմից, ապա այն նրան վերապահում է անչափահասի բժշկական և ատամնաբուժական խնամքը լիազորելու վերաբերյալ նույն իրավունքները, որոնք տրված են խնամակալներին՝ ըստ Ժառանգական գործերի օրենսգրքի 2353 հոդվածի։ Ազգական խնամողի կողմից լիազորված բժշկական խնամքը կարող է ներառել հոգեկան առողջության ծառայություններ, որոնք ենթակա են սահմանափակումների՝ ըստ Ժառանգական գործերի օրենսգրքի 2356 հոդվածի։
2. Առողջապահական ծառայություններ մատուցողը, որը բժշկական կամ ատամնաբուժական խնամք տրամադրելու նպատակով բարեխղճորեն ապավինում է խնամողի լիազորության հայտարարագրին՝ առանց հայտարարագրում նշվածներին հակասող փաստերի մասին փաստացի գիտելիք ունենալու, չի ենթարկվում քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության որևէ անձի նկատմամբ, և չի ենթարկվում մասնագիտական կարգապահական պատասխանատվության այդ ապավինման համար եթե ձևաթղթի համապատասխան մասերը լրացված են։ Դատարանի կնիք կամ ստորագրություն չի պահանջվում։ Սույն ձևաթուղթը նոտարական հաստատում չի պահանջում։
3. Սույն հայտարարագիրը անչափահասին չի դարձնում խնամյալ՝ առողջական ապահովագրության նպատակներով։